C-Quadrat Ampega
Asset Management
Armenia

2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
31 մարտի 2022թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Կառավարման վճարներից եկամուտ	4	674,522	674,522	521,925	521,925
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	949	949	646	646
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ կամ վնաս	6	(31,500)	(31,500)	17,304	17,304
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4,7	6,065	6,065	104	104
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(63,971)	(63,971)	(73,347)	(73,347)
Արտարժութային գործառնություններից զուտ վնաս	6	(1,510)	(1,510)	(389)	(389)
Արտարժույթի փոխարժեքի տատանումներից օգուտ /(վնաս)	6	(1,125)	(1,125)	458	458
Ֆինանսական ծախսեր	3	(1,905)	(1,905)	(2,273)	(2,273)
Վարչական և այլ ծախսեր	9,10	(258,242)	(258,242)	(201,010)	(201,010)
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		323,282	323,282	263,418	263,418
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	12	64,067	64,067	44,218	44,218
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		259,216	259,216	219,200	219,200
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-	-	-
Այլ համապարփակ եկամուտներ		-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		259,216	259,216	219,200	219,200

Արման Վարդանյան
Գլխավոր գործադիր տնօրեն

«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Արթուր Հարությունյան
Գլխավոր հաշվապահ
ՀԳԳՀ՝ 2 20 0017

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
31 մարտի 2022թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		31/03/22	31/12/21
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	55,697	16,526
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	15	-	-
«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	16	2,250,892	1,982,393
«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ	17	-	-
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	18	-	-
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	19	-	-
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	43,647	47,858
Օգտագործման իրավունքով ակտիվներ	20.1	18,664	76,013
Հետաձգված հարկային ակտիվներ	21	18,329	16,368
Այլ ակտիվներ	22	261,228	229,326
Ընդամենը՝ ակտիվներ		2,648,457	2,368,484
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	-	-
«Իական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող ֆինանսական պարտավորություններ	25	-	-
Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր	26	-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	27	-	-
Վարձակալության պարտավորություն	20.1	20,909	82,110
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտքեր	29	229,661	163,633
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր	28, 29	186,165	170,235
Ընդամենը՝ պարտավորություններ		436,735	415,978
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	30	650,000	650,000
Էմիսիոն եկամուտ		-	-
Պահուստներ՝		-	-
Գլխավոր պահուստ		-	-
Վերագնահատման պահուստներ		-	-
Չբաշխված շահույթ (վնաս)	33	1,561,722	1,302,506
Սեփական կապիտալի այլ տարրեր		-	-
Ընդամենը՝սեփական կապիտալ		2,211,722	1,952,506
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		2,648,457	2,368,484

Արման Վարդանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Արթուր Հարությունյան
Գլխավոր հաշվապահ
ՀԳԳՀ՝ 2 20 0017

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31 մարտի 2022թ.

հազար դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Չբաշխված շահույթ/վնաս	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը կապիտալ
Նախորդ համադրելի միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)						
1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2021թ.	650,000	-	-	918,861	-	1,568,861
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-
2. Վերահաշվարկված մնացորդը	650,000	-	-	918,861	-	1,568,861
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-	-	-
4. Համապարփակ եկամուտ	-	-	-	219,200	-	219,200
5. Շահութաբաժիններ	-	-	-		-	-
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)	-	-	-	-	-	-
7. Ներքին շարժեր	-	-	-	-	-	-
8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտ 2021թ.	650,000	-	-	1,138,061	-	1,788,061
9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2022թ.	650,000	-	-	1,302,506	-	1,952,506
9.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	-	-	-	-	-	-
10.Վերահաշվարկված մնացորդը	650,000	-	-	1,302,506	-	1,952,506
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	-	-	-	-	-	-
12. Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	259,216	-	259,216
13. Շահութաբաժիններ	-	-	-		-	-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում)	-	-	-	-	-	-
15. Ներքին շարժեր	-	-	-	-	-	-
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտ 2022թ.	650,000	-	-	1,561,722	-	2,211,722

Արման Վարդանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Արթուր Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ ՀԳԳՀ՝ 2 20 0017

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
31 մարտի 2022թ.

հազար դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ		01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը			
Ստացված կառավարման վճարներ		660,568	504,812
Ստացված տոկոսներ		949	-
Աշխատավարձի և նմանատիպ ծախսերի վճարում		(65,655)	(47,104)
Վճարված կոմիսիոն ծախսեր		(62,216)	(69,071)
Արտարժութային գործառնություններ		(1,510)	(389)
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)			
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(174,751)	(140,654)
Վճարված շահութահարկ		(12,798)	(9,711)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից			
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)		-	-
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)			
Բանկերում տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)		-	-
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		344,586	237,883
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում		(300,000)	
Մուտքեր իրական արժեքով ՇԿՎ միջոցով չափվող ֆինանսական ակտիվների օտարումից/մարումից		-	(210,000)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(351)	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում			
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(300,351)	(210,000)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Վճարված շահաբաժիններ		-	-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		(4,568)	(6,042)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-	
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		(4,568)	(6,042)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(496)	(51)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		39,667	21,842
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		16,526	8,206
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		55,697	29,997

Արման Վարդանյան

Գլխավոր գործադիր տնօրեն

«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ
Արթուր Հարությունյան

Գլխավոր հաշվապահ, ՀԳԳՀ՝ 2 20 0017

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ընդհանուր դրույթներ**

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն ստեղծվել է 2013թ. նոյեմբերի 29-ին, և գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ և ստացել թիվ 3 լիցենզիան:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում մասնակիցների ընդհանուր ժողովը, դիտորդ խորհուրդը և գլխավոր գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Արման Վարդանյանը:

Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարման լիցենզիայով և թույլտվությամբ նախատեսված գործունեություն:

Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Ընկերությունն ունի խորհուրդ, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով Ընկերության կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Ընկերության մասնակիցներն են հանդիսանում «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ» Ընկերությունը, որը գրանցված է Վիեննայում, Ստուբենռինգ 2 հասցեով, գրանցման համար FN

55148a և «Տալանքս Ասսետ Մենեջմենթ» ՍՊԸ-ն, որը գրանցված է Շարլ-դե-գոլլ փլաթց 1, Գերմանիա 50679 Քյոլն հասցեով, գրանցման համար HRB 61047:

Ընկերության հասցեն է ՀՀ, ք. Երևան, Հանրապետության փող. 37:

Ընկերությունը իրականացնում է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված երեք՝

1.Հավասարակշռված,

2.Պահպանողական և

3.Կայուն եկամտային ֆոնդերի կառավարում, որոնց մանրամասն նկարագրությունը ներկայացված է ֆոնդի կանոններով:

2019թ.-ից սկսած ընկերությունը իրականացնում է նաև Ցե-Քյու Արմենիա Գրոութ ներդրումային ֆոնդի կառավարումը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2022թ. Ապրիլի 27-ին Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Արման Վարդանյանի և «Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ Արթուր Հարությունյանի կողմից:

2. **Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները**

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

1.2 **Չափման հիմունքները**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող՝ ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

1.3 **Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը**

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

1.4 **Հարկում**

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

1.5 **Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

1.6 **Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում ենիրական արժեքի գործիքներին:

1.7 **Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնականարժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:
Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվողֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

բ) Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը, բացառությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով տոկոսներից, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

գ) Ակտիվների կառավարման գործունեություն

Պորտֆելի և այլ կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն՝ ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումային հիմնադրամների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:
Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունը նաև վաստակում է ակտիվների կառավարման վճարներ խորհրդատվական լուծումներ առաջադրելիս, որոնք ներառում են խորհրդատվական և հաշիվների կառավարման ծառայություններ: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:
Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և համապատասխանաբար՝ չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

դ) Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համաապատսխան ծառայությունների կատարումից հետո:

ե) Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ), բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ), գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը: Սկզբնական ճանաչման պահին որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» է այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաճչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նաշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

· այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և

· դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Սկզբնական ճանաչման պահին բաժնային գործիքը, որը չի պահվում առևտրական նպատակներով, կարող է անդառնալիորեն նախորոշվել որպես ԻԱԱՀՖԱ չափվող: Այդպիսի ընտրությունը կատարվում է գործիք առ գործիք հիմունքով:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելո համար, և

- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պատքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով: ԱՊԿ-ը պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատական է: Դա չափվում է որպես դրամական պակասուրդի (պայմանագրի համաձայն Ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հուքերի միջև տարբերություններ, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաց գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

ԻԱՇԿՎ ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՇԿՎ չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է առևտրական նպատակներով կամ դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեդջավորման գործիք:

Առվտրական նպատակներով չպահվող ֆինանսական պարտավորությունը կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես ԻԱՇԿՎ չափվող, եթե՝

• նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝

• ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
• Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգվում է որպես ԻԱՇԿՎ չափվող:

ԻԱՇԿՎ չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող օգուտները կամ կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ իրական արժեքի փոփոխության՝ պարտավորության պարտքային ռիսկին վերագրելի մասից, որը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:
Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում:

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:
գ) Հիմնական միջոցներ
(a) Ճանաչումը և չափումը
Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:
(b) Հետագա ծախսումներ
Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:
(c) Մաշվածություն
Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:
Ընթացիկ ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Տնտեսական գույք	1-10 տարի
Կապիտալ վերանորոգում	3-10 տարի

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:
Ոչ նյութական ակտիվներ
Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են:

Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:
Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:
Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, որը ներկայացված է ստորև.

Համակարգչային ծրագրեր	1-5 տարի

Ծանոթագրություն 3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	949	949	646	646
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	-	-	-	-
Ընդամենը	949	949	646	646

Տոկոսային և նմանատիպ ծախսեր	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	-	-	-	-
Տոկոսային ծախսեր վարձակալական պարտավորությունների գծով	(1,905)	(1,905)	(2,273)	(2,273)
Ընդամենը	(1,905)	(1,905)	(2,273)	(2,273)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	(956)	(956)	(1,627)	(1,627)

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Ներդրումային ֆոնդերի կառավարման պարգևավճարներ	674,522	674,522	521,925	521,925
Այլ միջնորդավճարներ	223	223	104	104
Ընդամենը	674,745	674,745	522,029	522,029

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Միջնորդավճարների գծով	(63,971)	(63,971)	(73,347)	(73,347)
Ընդամենը	(63,971)	(63,971)	(73,347)	(73,347)
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ (ծախս)	610,774	610,774	448,682	448,682

Ծանոթագրություն 5. Եկամուտ շահաբաժիններից

Ընկերությունը շահաբաժիններից եկամուտներ չի ունեցել:

Ծանոթագրություն 6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Շահույթ կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ	-	-	-	-
Շահույթ կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(31,500)	(31,500)	17,304	17,304
Ընդամենը	(31,500)	(31,500)	17,304	17,304

Արտարժութային գործառնություններից	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ (ծախս)	(1,510)	(1,510)	(389)	(389)
Արտարժութային հոդվածների վերագնահատումից ստացված զուտ օգուտ (կորուստ)	(1,125)	(1,125)	458	458
Ընդամենը	(2,635)	(2,635)	69	69
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	(34,135)	(34,135)	17,373	17,373

Ծանոթագրություն 7. Այլ գործառնական եկամուտ

	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-	-	-
Այլ օգուտներ (կորուստներ)	5,842	5,842	-	-
Ընդամենը	5,842	5,842	-	-

Ծանոթագրություն 8. Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Ընկերությունը զուտ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում չի իրականացրել:

Ծանոթագրություն 9. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(66,960)	(66,960)	(44,094)	(44,094)
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	(921)	(921)	(133)	(133)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-	-	-
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	(134,602)	(134,602)	(107,333)	(107,333)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(1,055)	(1,055)	(878)	(878)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(625)	(625)	(890)	(890)
Գովազդի ծախսեր	-	-	-	-
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(26,425)	(26,425)	(22,199)	(22,199)
Ապահովագրական ծախսեր	(1,359)	(1,359)	(1,287)	(1,287)
Ներկայացուցչական և այլ վարչական ծախսեր	(10,711)	(10,711)	(12,035)	(12,035)
Ընդամենը	(242,658)	(242,658)	(188,849)	(188,849)

2022թ. առաջին եռամսյակի ընթացքում աշխատողների թիվը եղել է 10:

Ծանոթագրություն 10. Այլ ծախսեր

Այլ գործառնական ծախսեր	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Հասարակական կապերի գծով ծախսեր	(963)	(963)	(314)	(314)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(9,080)	(9,080)	(7,068)	(7,068)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(134)	(134)	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութականակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-	-		
Սարքավորումների սպասարկման, պահպանման և այլ ծախսեր	(5,408)	(5,408)	(4,779)	(4,779)
Ընդամենը	(15,584)	(15,584)	(12,161)	(12,161)

Ծանոթագրություն 11. Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)

Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս) Ընկերությունը չի ունեցել:

Ծանոթագրություն 12. Շահութահարկի գծով ծախս (Եկամուտ)

	01.01.22-31.03.22	01.01.22-31.03.22	01.01.21-31.03.21	01.01.21-31.03.21
Ընթացիկ հարկի գծով ծախս (եկամուտ)	66,028	66,028	44,925	44,925
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)	(1,961)	(1,961)	(707)	(707)
Ընդամենը	64,067	64,067	44,218	44,218

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2022թ. հունվար-մարտ	**Արդյունավետ դրույքաչափ (%)**	**2021թ. հունվար-մարտ**	**Արդյունավետ դրույքաչափ (%)**
Շահույթը (վնասը) մինչև հարկումը	323,282	-	263,418	-
Շահութահարկ՝ դրույքաչափով	58,191	18.00	47,415	18.00
Չհարկվող եկամուտներ	-1,316	-0.41	-6,054	-2.30
Չնվազեցվող ծախսեր	9,153	2.83	3,564	1.35
Շահութահարկի դրույքաչափի փոփոխության ազդեցություն		-		-
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվ հարկային վնասից	-	-		-
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	66,028	20.42	44,925	17.05

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

	Մնացորդն առ 31.12.21 դրությամբ	2022թ. շահույթում կամ վնասում ճանաչված	Մնացորդն առ 31.03.22 դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	16,368	1,961	18,329
Այլ ակտիվների գծով	1,097	(693)	404
Ստեղծված պահուստների գծով	15,584	2,654	18,238
Հիմնական միջոցների գծով	(313)	-	(313)
Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ թվում՝	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	-	-	-
Հիմնական միջոցների գծով	-	-	-
Այլ պարտավորությունների գծով	-	-	-
Այլ ակտիվների գծով	-	-	-
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորություն	16,368	1,961	18,329
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	-	-	-
Ընդամենը զուտ հետաձգված հարկային ակտիվի (պարտավորության) շարժ	16,368	1,961	18,329

Ծանոթագրություն 13. Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

13.1. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	31/03/22	31/12/21
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	-	-

13.2. Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը

	31/03/22	31/12/21
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 14. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ընթացիկ հաշիվներ	31/03/22	31/12/21
ՀՀ բանկերում ընթացիկ հաշիվներ	52,776	15,096
Այլ բանկերում	1,978	1,431
Հաշվեգրված տոկոսներ	943	-
Ընդամենը	55,697	16,526
Ներդրված ավանդներ	-	-
Հաշվեգրած տոկոսներ	-	-
Ընդամենը	55,697	16,526
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)		
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	55,697	16,526

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Ծանոթագրություն 15. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաճախորդների նկատմամբ պահանջներ չի ունեցել:

Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջում Ընկերությունը ժամկետանց, խնդրահարույց և արժեզրկված վարկեր և տրամադրած փոխառություններ չի ունեցել:

Ընկերությունը չունի նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացված ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում ստացված և տեղաբաշխված միջոցներ:

Ծանոթագրություն 16.«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ

Պետական արժեթղթեր	31/03/22	31/12/21
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝	-	-
զանձապետական պարտատոմսեր	-	-
Ընդամենը պետական արժեթղթեր	-	-
ՀՀ ոչ պետական արժեթղթեր	31/03/22	31/12/21
	Զցուցակված	***Զցուցակված***
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի	-	-
երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	-
կապիտալի գործիքներ	-	-
ֆոնդերի փայեր	2,250,892	1,982,393
Ընդամենը ՀՀ ոչ պետական արժեթղթեր	2,250,892	1,982,393
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	-	-
Ֆորվարդ	-	-
Փոխարժեքային սվոպ	-	-
Ընդամենը	-	-
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	2,250,892	1,982,393

Ծանոթագրություն 17.«Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 18. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 19. Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում

Ընկերությունն այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ չունի:

Ծանոթագրություն 20. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	**Համակ. և կապի միջոցներ**	**Տնտեսական գույք**	**Այլ հիմնական միջոցներ**	**Կապիտալ վերանոր.**	**Ընդամենը**
Սկզբնական արժեք					
Մնացորդը 31.12.20	10,456	30,392	30,198	4,792	75,838
Ավելացում	8,618	915	1,953	-	11,485
Այլ նվազեցում		(420)			(420)
Մնացորդը 31.12.21	19,074	30,886	32,151	4,792	86,904
Ավելացում	224	127	-	-	351
Այլ նվազեցում	-	(4,098)	-		(4,098)
Մնացորդը 31.03.22	19,297	26,916	32,151	4,792	83,156
Կուտակված մաշվածություն					
Մնացորդը 31.12.20	5,478	17,149	4,262	2,738	29,627
Ավելացում	2,209	3,144	3,858	1,027	10,238
Այլ նվազեցում		(346)			(346)
Մնացորդը 31.12.21	7,687	19,948	8,120	3,765	39,519
Ավելացում	1,956	760	1,454	257	4,427
Այլ նվազեցում	-	(4,097)	-		(4,097)
Մնացորդը 31.03.22	9,643	16,611	9,574	4,022	39,849
Զուտ հաշվեկշռային արժեք					
31.12.21	11,387	10,938	24,031	1,027	47,385
31.03.22	9,654	10,305	22,577	770	43,307

Ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	**Համակարգչային ծրագրեր**		**Ընդամենը**
Սկզբնական արժեք			
Մնացորդը 31.12.20	1,545	-	1,545
Ավելացում	-	536	536
Մնացորդը 31.12.21	1,545	536	2,081
Ավելացում	-	-	-
Մնացորդը 31.03.22	1,545	536	2,081
Կուտակված ամորտիզացիա			-
Մնացորդը 31.12.20	1,545	-	1,545
Ավելացում	-	63	63
Մնացորդը 31.12.21	1,545	63	1,608
Ավելացում	-	134	134
Մնացորդը 31.03.22	1,545	197	1,742
Զուտ հաշվեկշռային արժեք			-
31.12.21	-	473	473
31.03.22	-	339	339

Ծանոթագրություն 20.1 Օգտագործման իրավունքով ակտիվներ և վարձակալական պարտավորություններ

Հոդվածի անվանումը	Շինություններ
Սկզբնական արժեք	
Մնացորդը 31.12.20	134,427
Ավելացում	
Մնացորդը 31.12.21	134,427
Ավելացում	
Նվազում	-99,702
Մնացորդը 31.03.22	34,725
Կուտակված ամորտիզացիա	
Մնացորդը 31.12.20	-39,799
Ավելացում	-18,615
Մնացորդը 31.12.21	-58,414
Ավելացում	-4,654
Նվազում	47,007
Մնացորդը 31.03.22	-16,062
Զուտ հաշվեկշռային արժեք	
31.12.21	76,013
31.03.22	18,664

Շահույթում և վնասում ճանաչված գումարներ	**31.03.2022թ.**	**31.12.2021թ.**
Օգտագործման իրավունքով ակտիվների մաշվածության ծախս	4,654	18,615
Վարձակալական պարտավորությունների տոկոսային ծախս	1,905	8,667

Վարձակալական պարտավորություններ	**31.12.2022թ.**	**31.12.2021թ.**
ժամկետայնության վերլուծություն	վարձակալությամբ վճարման ենթակա գումարներ	վարձակալությամբ վճարման ենթակա գումարներ
1-ին տարի	4,860	24,167
2-րդ տարի	6,485	24,167
3-րդ տարի	6,485	24,167
4-րդ տարի	6,485	24,167
5-րդ տարի և ավելի	800	3,023
Ընդամենը վարձակալական պարտավորություններ	25,115	99,691
Չվաստակած տոկոս	(4,206)	(17,581)
Վարձակալական պարտավորությունների հաշվեկշռային արժեք	20,909	82,110

Ծանոթագրություն 21. Հետաձգված հարկային ակտիվներ

Տե՛ս ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 22. Այլ ակտիվներ

Այլ ակտիվներ	31/03/22	31/12/21
Ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք պարգևավճար	235,866	221,688
Տրված կանխավճարներ	19,665	1,160
Հետաձգված ծախսեր	4,867	6,471
Այլ անձանցից ստացվելիք գումարներ	-	-
Այլ ակտիվներ	830	7
Ընդամենը	261,228	229,326

Ծանոթագրություն 23. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	31/03/22	31/12/21
Ստացված փոխառություններ և վարկեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	31/03/22	31/12/21
Ներգրավված փոխառություններ	-	-
Ռեպո համաձայնագրեր	-	-
Հաշվեգրված տոկոսներ	-	-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 25. «Իական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) հաշվառվող ֆինանսական պարտավորություններ չի ունեցել:

Ծանոթագրություն 26. Ընկերության կողմից թողարկված արժեթղթեր

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի:

Ծանոթագրություն 27. Հետաձգված հարկային պարտավորություններ

Տե՛ս ծանոթագրություն 12:

Ծանոթագրություն 28. Պահուստներ

Պահուստներ	31/03/22	31/12/21
Սկզբնական մնացորդ	86,577	70,669
Պահուստին կատարված մասհանումներ	16,062	92,094
Պահուստի օգտագործում	(1,315)	(76,185)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	14,747	15,909
Վերջնական մնացորդ	101,324	86,577

Պահուստները վերաբերում են չօգտագործված արձակուրդի գումարներին և աուդիտինին, ինչպես նաև պարգևատրումների պահուստը: Բոլոր պահուստների գծով էլ Ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրանց արդյունքում դրամական արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և աուդիտի ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը՝ պահուստների գումարը որոշվել է առանց զեղչման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 29. Այլ պարտավորություններ

Այլ պարտավորություններ	31/03/22	31/12/21
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝		
Ավելացված արժեքի հարկի գծով և ոչ ռեզիդենտի շահութահարկի	9,937	10,478
Շահութահարկ	229,661	163,633
Եկամտային հարկի գծով	-	42
Պարտադիր կուտակային վճար	-	-
Դրոշմանիշային վճար	-	-
Պարտավորություններ մատակարարների նկատմամբ	74,904	73,137
Այլ պարտավորություններ	-	-
Ընդամենը	314,502	247,290

Ծանոթագրություն 30. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 650,000 հազ. ՀՀ դրամ է, որը կազմված է 650,000 (վեց հարյուր հիսուն հազար) բաժնեմասից, որոնցից յուրաքանչյուրի անվանական

արժեքը կազմում է 1,000 (հազար) ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է Ընկերության մասնակիցների կողմից:

Կանոնադրական կապիտալում մասնակիցների և նրանց մասնաբաժնի չափը

Մասնակցի անունը,ազգանունը	**Ունեցած մասնակցության գումարը**	**Մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ**
«Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ» Ընկերություն	486,850	74.90%
«Տալանքս Ասսետ Մենեջմենթ» ՍՊԸ	163,150	25.10%

Ծանոթագրություն 31. Կապիտալի այլ տարրեր

Կապիտալի այլ՝ չբացահայտված տարրեր չկան :

Ծանոթագրություն 32. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու եռամսյակում Ընկերության բաժնետերերի կողմից վերահսկվող այլ կազմակերպությունների հետ տեղի են ունեցել հետևյալ գործարքները.

(i) Ծախսեր

	2022թ.		**2021թ.**	
	Գործարքի գումար	**Չմարված մնացորդ**	**Գործարքի գումար**	**Չմարված մնացորդ**
հազ. դրամ	**Հաշվետու եռամսյակ**		**Հաշվետու եռամսյակ**	
Ընկերության բաժնետերերի կողմից վերահսկվող և դուստ կազմակերպություններից՝				
Խորհրդատվական և այլ ծառայություններ	103,572	35,316	88,147	30,133
	103,572	35,316	88,147	30,133

Կապակցված կողմերի հետ բոլոր գործարքներն իրականացվել են շուկայական պայմաններով:

Ծանոթագրություն 33. Կապիտալ և կապիտալի համարժեքություն

	31/03/22	31/12/21
Կանոնադրական կապիտալ	650,000	650,000
Գլխավոր պահուստ	-	-
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)	259,216	959,645
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)	1,302,506	342,861
Ընդամենը	2,211,722	1,952,506

Ծանոթագրություն 34. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներն արտացոլված են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ:

Ծանոթագրություն 35. Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում

31.03.22թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

Ծանոթագրություն 36. Վարձակալություն

Ընկերությունը իր գործունեությունը կազմակերպում է վարձակալությամբ ստացված տարածքում:

Ծանոթագրություն 37. Ապաճանաչում

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրա մի մասի ապաճանաչման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

Ծանոթագրություն 38. Գրավադրված ակտիվներ

31.03.22թ. դրությամբ Ընկերությունը գրավադրված ակտիվներ չունի:

Ծանոթագրություն 39. Ընդունված գրավ

Ընկերությունը 31.03.22թ. դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 40. Պարտավորությունների չկատարում/խախտում

31.03.22թ. դրությամբ Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի ղեկավարության հայտարարությունը

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակն արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից

շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,

- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվություններն Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
- Ընկերությունում գործում է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ,

- Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

Հավաստիացնում ենք նաև, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Գլխավոր գործադիր տնօրեն **Արման Վարդանյան**

Գլխավոր հաշվապահ **«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ Արթուր Հարությունյան**

27.04.2022թ.